ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/76

«04» «06» 2020թ.

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Անհատ Ձեռնարկատեր Ջանիկ Սևոյանը, ի դեմս տնօրեն Ջանիկ Սևոյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 6290000 (Վեց միլիոն երկու հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Իրավաբանական հասցե՝
Կառավարական տուն 2,	ՀՀ գ. Շահումյան,Գայի 8
ՀՀ ֆինանսների նախարարության	Գործունեության հասցե՝
գործառնական վարչություն	ՀՀ ք.Երևան, Տերյան 105/1
Հ/Հ 900011032472	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 1930070102110100
	ՀՎՀՀ 37488172

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

_____ Վ. Գասպարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Տնօրեն՝

_____ Ջանիկ Սևոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
«04» «06» 2020 թ. կնքված
ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-20/76 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման ժամկետը**
1	92221100/1	Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ	Ծառայությունը նախատեսում է ««100 գաղափար Հայաստանի համար» երիտասարդական նորարարական հեռուստահաղորդաշարի նկարահանում և հեռարձակում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) կազմակերպումը: *Ծրագրի շրջանակներում կիրականացվի ««100 գաղափար Հայաստանի համար» համահայկական երիտասարդական մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթի անցկացման կարգի* համաձայն կստեղծվի Մրցույթի կազմկոմիտե (այսուհետ՝ Կազմկոմիտե) և կձևավորվի Մրցույթի փորձագիտական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):* Ծրագրի նպատակն է՝ Մրցույթի նկարահանման և հանրապետական հեռուստասփռման միջոցով զարգացնել երիտասարդների նորարարական մտածողությունը, երիտասարդներին ներգրավել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում, խթանել գիտատեխնիկական մշակումներ և նորարարական նախագծեր իրականացնելու քաղաքացիական նախաձեռնությունները: *Ծրագիրը նախատեսվում է իրականացնել ներքոնշված չափանիշներին* համապատասխան:*	դրամ	6290000	1	2020 թվականի սեպտեմբերի 1-ից, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրից (բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում) մինչև 2020 թվականի դեկտեմբերի 10-ը

*Ծրագրի իրականացման չափանիշներ

1. Նախապատրաստական աշխատանքներ.

Նախապատրաստական աշխատանքներն իրականացվելու են 2020 թվականի սեպտեմբերի 1-ից, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրից (բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում) և կավարտվի մինչև 2020 թվականի հոկտեմբերի 15-ը:

Ծրագրի նախապատրաստական աշխատանքների իրականացման նպատակով Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովելու է՝

1.1 Ծրագրի տարբերանշանի մշակումը, որը օգտագործվելու է Ծրագրի շրջանակներում բոլոր տպագրական և գովազդային նյութերի վրա.

Տարբերանշանի դիզայնը պետք է համաձայնեցնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության (այսուհետ՝ ԵՔ վարչություն) հետ:

1.2 Գովազդային արշավի կազմակերպումը.

Առնվազն 30 վարկյան տևողությամբ գովազդային հոլովակի պատրաստում՝ նկարահանված գրաֆիկական և անիմացիոն լուծումներով, 4K ֆորմատով Ծառայության մատուցման սկզբից 15 օրվա ընթացքում:

Գովազդային հոլովակը պետք է համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

Ծրագրի մասին տեղեկատվության լայն տարածումը 1 ամիս տևողությամբ՝ Ծրագրի մասին տեղեկատվական հայտարարությունների և գովազդային հոլովակի տարածում հեռուստատեսությամբ, կայքերով, թերթերով, սոցիալական ցանցերով, ինչպես նաև տարբեր հեռուստաալիքներով հեռուստահյուրերի մասնակցության ապահովում:

1.3 Ֆոտոսեսիայի համար գովազդային պաստառը և Ծրագրի այցեքարտերը.

Պաստառի չափերը՝ 2 մ x 3 մ:

Ծրագրի այցեքարտերի չափը՝ 9 սմ x 3,5 սմ: Այցեքարտերի վրա պետք է նշված լինի այն էլեկտրոնային հասցեն, որտեղից մրցանակաբաշխության հյուրերը կարող են տեսնել իրենց նկարները: Այցեքարտի ձևանմուշը պետք է համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

1.4 Բեմի ձևավորման համար անհրաժեշտ պաստառների պատրաստումը և գունավոր տպագրությունը.

Բեմի ձևավորման համար անհրաժեշտ պաստառների դիզայն և տպագրություն համապատասխան տարբերանշանով: Պաստառների դիզայնը պետք է համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

Կախված տարածքի ընտրությունից պաստառների չափերը ըստ անհրաժեշտության կարող են փոփոխվել: Պաստառների ընդհանուր չափը 10 քմ:

1.5 Մրցանակ (5 հատ).

Մրցանակ տակդիրով՝ պատրաստված ապակուց, բարձրությունը՝ 15-20 սմ, լայնությունը՝ 8-10 սմ, դիզայն և պատրաստում: Մրցանակների դիզայնը պետք է համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

1.6 Հավաստագիր (5 հատ).

5 անվանակարգերում հաղթած մասնակիցների համար հավաստագրերի դիզայն և գունավոր տպագրություն (տեքստը և դիզայնը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ), չափը A5 (թուղթը՝ պատրաստված Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի ապրիլի քսանչորսի ծաղիկներով, տեղադրված ապակեպատ փայտե շրջանակի մեջ)

1.7 Շնորհակալագիր (20 հատ).

Հանձնաժողովի և Կազմակոմիտեի անդամների համար շնորհակալագրերի դիզայն և գունավոր տպագրություն՝ տեղադրված ապակեպատ փայտե շրջանակի մեջ:

Տեքստը և դիզայնը պետք է համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

Չափը A4, թուղթը, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ:

Հանձնաժողովի և Կազմկոմիտեի անվանացանկը կտրամադրվի ԵՔ վարչության կողմից:

1.8 Հրավիրատոմս (150 հատ) երկկողմանի գունավոր տպագրությամբ.

Չափը 21 սմ x 10 սմ, տպագրված Ծրագրի տարբերանշանով, թուղթը, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ: Հրավիրատոմսի տեքստը և դիզայնը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

2. Հեռուստահաղորդաշարի նկարահանում

Հեռուստահաղորդաշարի նկարահանման աշխատանքները կմեկնարկեն 2020 թվականի հոկտեմբերի 1-ին և կավարտվեն 2020 թվականի նոյեմբերի 30-ին:

Հեռուստահաղորդաշարը բաղկացած է լինելու 4 հաղորդումներից, յուրաքանչյուր հաղորդման տևողությունը՝ 10 րոպե: Հեռուստահաղորդումները առանձին-առանձին ներկայացնելու են Մրցույթի ընթացքը ըստ գործողությունների հերթականության, ինչպես նաև հաղթող նախագծերը և դրանց հնարավոր զարգացումները: Հաղորդաշարի ընթացքում ներկայացվելու է նաև գաղափարների հեղինակների և հեղինակային խմբերի աշխատանքային գործընթացը: Ներկայացվելու է Հանձնաժողովի և Կազմակոմիտեի անդամների սինխրոն նկարահանումներից հատվածներ, որտեղ նրանք կներկայացնեն Մրցույթի վերաբերյալ իրենց կարծիքը:

<u>Հեռուստահաղորդաշարի նկարահանման նպատակով Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովելու է՝</u>

2.1 Սինխրոն նկարարհանումներ Կազմկոմիտեի և Հանձնաժողովի անդամների հետ.

Նկարահանման օրերը պետք է համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

2.2 Նախնական գնահատման փուլը հաղթահարած առավելագույնը 20 գաղափարների հեղինակների նկարահանում և մոնտաժ.

Ըստ ոլորտների սինխրոն նկարահանումներ, ինչպես նաև աշխատանքային գործընթացների նկարահանումներ:

Նկարահանումների իրականացման ժամկետը պետք է համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

2.3 Ընտրված 20 գաղափարների ցուցահանդես-ներկայացումների նկարահանումներ և մոնտաժ.

Իրականացման ժամկետը պետք է համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

2.4 Ընտրված 20 լավագույն գաղափարների վերաբերյալ տեսահոլովակների պատրաստումը.

Յուրաքանչյուր տեսահոլովակի տևողությունը 2 րոպե:

Տեսահոլովակը պետք է ներկայացնի գաղափարի հեղինակի մտահղացումն ու ներառի աշխատանքային գործընթացը:

2.5 «100 գաղափար Հայաստանի համար» երիտասարդական նորարարական մրցույթի մրցանակաբաշխության կազմակերպումը և նկարահանումը.

Մրցանակաբաշխության անցկացման օրն ու ժամը պետք է համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

Մրցանակաբաշխության ժամանակ յուրաքանչյուր անվանակարգի ներկայացումներից հետո էկրանին կցուցադրվեն յուրաքանչյուր գաղափարի մասին պատրաստված 2 րոպեանոց տեսահոլովակները, ապա հաղորդավարը կհայտարարի համերգային երկուական համարների կատարման վերաբերյալ, որից հետո կներկայացնի տվյալ անվանակարգի համար հայտ ներկայացրած գաղափարների վերաբերյալ Հանձնաժողովի գնահատականների և Կազմկոմիտեի որոշման մասին: Հայտարարությունից հետո բեմ կհրավիրվի հաղթող գաղափարի հեղինակը և նրան կհանձնվի մրցանակ-հուշանվեր և հավաստագիրը:

Մրցանակաբաշխության ընթացքում շնորհակալագրեր կհանձնվեն նաև Կազմկոմիտեի և Հանձնաժողովի անդամներին:

<u>Մրցանակաբաշխության կազմակերպման համար Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ապահովի՝</u>

2.6 150-տեղանոց հարմարավետ տարածք.

Մրցանակաբաշխության կազմակերպման նպատակով անհրաժեշտ է 150-տեղանոց հարմարավետ տարածք Երևան քաղաքում՝ ձևավորված Մրցույթի ոճին համապատասխան: Տարածքը պետք է ապահովված լինի Ծրագրի նախապատրաստական փուլում տպագրված համապատասխան պաստառներով ձևավորված բեմով, ամբիոնով, ձայնային և լուսային համապատասխան տեխնիկայով, մրցանակաբաշխության ներկայացման համար անհրաժեշտ էկրաններով:

2.7 Հաղորդավար.

Հաղորդավարը ներկայացնելու է անվանակարգերն ու գաղափարների հեղինակներին, ինչպես նաև հայտարարելու է երաժշտական համարների կամ կատարումների մասին՝ համաձայն նախապես մշակված սցենարի: Սցենարը պետք է համաձայնեցնել ԵՔ վարչության հետ:

2.8 Համերգային ծրագիր՝ ռոկ և/կամ ջազ խմբերի և համույթների մասնակցությամբ.

Համերգը կտևի ընդհանուր 60 րոպե: Յուրաքանչյուր անվանակարգի ներկայացումներից հետո 2-ական կատարում: Ընդհանուր 10 կատարում:

2.9 Լուսային համակարգ մրցանակաբաշխության օրը համերգի կազմակերպման համար.

- շարժական լույս BEAM R7 230WATT (կամ համարժեք)- 10 հատ,
- շարժական լույս LED WASH RGBW 30x12WATT (կամ համարժեք) - 6 հատ,
- ստատիկ լույս LED PAR RGBW 54x3 WATT (կամ համարժեք) - 4 հատ,
- թարթող լույսեր STROB 2000 WATT (կամ համարժեք)– 1 հատ,
- ստատիկ լույս PAR 64 (կամ համարժեք) - 4 հատ,

2.10 Ձայնային սարքավորումների համակարգ մրցանակաբաշխության օրը համերգի կազմակերպման համար.

Ձայնային սարքավորումները պետք է համապատասխանեն ընտրված տարածքում ջազային կամ ռոք խմբին անհրաժեշտ պարամետրերին:

2.11 Էկրան՝ միացված համապատասխան համակարգչի և մոնիտորի (3 հատ)

Յուրաքանչյուր էկրանը՝ 40 դյույմ տեղադրված բեմի տարբեր հատվածներում, որոնք պետք է ապահովեն 20 լավագույն նախագծերի վերաբերյալ տեսահոլովակների ներկայացումը հյուրերին:

2.12 20 գաղափարների հեղինակների և հեղինակային խմբերի հետ կազմակերպչական աշխատանքների իրականացումը.

- 20 գաղափարների հեղինակների աշխատանքները ներկայացնելու ժամանակացույցի հստակեցման հետ կապված աշխատանքները,
- 20 գաղափարների հեղինակներին մրցանակաբաշխությանը հրավիրելու հետ կապված աշխատանքները:

2.13 150 հյուրերի համար մատուցողներով հյուրասիրության (շամպայն) կազմակերպում ջազային նվագախմբի (ջազբենդ) նվագակցությամբ.

2.14 Գովազդային պաստառի դիմաց հյուրերի համար ֆոտոսեսիայի կազմակերպում և 1 օրվա ընթացքում լուսանկարների տրամադրում ԵՔ վարչությանը:

3. Հեռուստահաղորդաշարի հեռարձակում.

Հեռուստահաղորդաշարի հաղորդումների հեռարձակումը կիրականացվի 2020 թվականի դեկտեմբերի 1-10-ն ընկած ժամանակահատվածում:

<u>Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ապահովի՝</u>

3.1 Հեռուստահաղորդաշարի եթեր հեռարձակումը (օրերը և ժամերը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ)

Հեռուստահաղորդաշարի հաղորդումները եթեր են հեռարձակվելու «պրամ թայմ» հանրապետական սփռմամբ, իսկ կրկնությունները հաջորդ օրերը ցերեկային ժամերին:

4. Ծրագրի իրականացման վերաբերյալ ամփոփ հաշվետվության ներկայացում

Հաշվետվությունը պետք է ներառի Ծրագրի իրականացման ընթացքում կատարված լուսանկարներն ու հեռուստահաղորդաշարը՝ ներբեռնած էլեկտրոնային կրիչի վրա:

*** Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2016 թվականի մայիսի 4-ի «100 գաղափար Հայաստանի համար» համահայկական երիտասարդական մրցույթի անցկացման կարգը, անվանակարգերը և հայտի ձևը հաստատելու մասին» № 83-Ա/1 հրաման**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

----------Վ.Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

----------Ջ.Սևոյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
« 04 » « 06 » 2020 թ. կնքված
ՀՀԿԳՄՄՆԳՀՇՁԲ-20/76 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ. դրամ

Ծառայության														
Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր /մինչև 30-ը/	Ընդամենը
1	92221100/1	Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ												6290000	6290000

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

----------Վ.Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

----------Ջ.Սևոյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 4.1
ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-20/76 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան «02» հունիս 2020թ.**

«Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյանը»-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Նույնականացման քարտի համարը 010680437, տրված 02.11.2018թ., 011-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-20/76 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի զանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից զանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:**

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Զանիկ Սնոյան» ԱՁ
ՀՀ գ. Շահումյան, Գայի 8
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930070102110100
ՀՎՀՀ 37488172

02/06/2020

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***	
2. Թիվ	
3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն) `**«Ջանիկ Սևոյան» ԱՁ**	
5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **«Կոնվերսբանկ» ՓԲԸ**	
6. Վճարողի հաշվի համարը՝ **Հ/Հ 1930070102110100**	
7. Վճարողի **ՀՎՀՀ՝37488172**	
8. Վճարողի **ՀԾՀ՝2107940215**	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի **ՀՎՀՀ՝02698732**	
12. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**	
13. Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900008000664**	
14. Գումարը (թվերով և բառերով)՝ **6290000 վեց միլիոն երկու հարյուր իննսուն հազար**	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16. Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ AMD**	
17. Գործարքի (վճարման) նպատակը՝ ***որակավորման ապահովման համար***	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/76**	
19. Վճարման պայմանները՝ «ակցեպտավորված վճարում»	
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22. ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22. բ Կ.Տ.	21. ա Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21. բ Կ.Տ.
24. ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24. բ. Կ.Տ. 24. "___" ___ 20___ թ.	23. ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23. բ. Կ.Տ. 23. "___" ___ 20___ թ.

Հավելված 5.1
ՀՀԿԳՄՄՆԳՀՇՁԲ-20/76 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «02» հունիս 2020թ.**

«Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սնոյանը»-ը, ի դեմս Ընկերության տնօրեն Նույնականացման քարտի համարը 010680437, տրված 02.11.2018թ., 011-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՀՀԿԳՄՄՆԳՀՇՁԲ-20/76 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի զանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից զանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.5 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.6 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.7 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը

որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.8 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.9 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Ջանիկ Սևոյան» ԱՁ
ՀՀ գ. Շահումյան, Գայի 8
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930070102110100
ՀՎՀՀ 37488172

02/06/2020

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ***
2.	Թիվ
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4.	Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն) `**«Ջանիկ Սևոյան» ԱՁ**
5.	Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **«Կոնվերսբանկ» ՓԲԸ**
6.	Վճարողի հաշվի համարը՝ **Հ/Հ 1930070102110100**
7.	Վճարողի **ՀՎՀՀ՝37488172**
8.	Վճարողի **ՀԾՀ՝2107940215**
9.	Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**
10.	Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)
11.	Շահառուի **ՀՎՀՀ՝02698732**
12.	Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
13.	Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900005000758**
14.	Գումարը (թվերով և բառերով)՝ **629000 վեց հարյուր քսանինը հազար**
15.	Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)
16.	Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ AMD**
17.	Գործարքի (վճարման) նպատակը՝ ***պայմանագրի ապահովման համար***
18.	Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/76**
19.	Վճարման պայմանները՝ «ակցեպտավորված վճարում»
20.	Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22. ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22. բ Կ.Տ.	21. ա Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21. բ Կ.Տ.
24. ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24. բ. Կ.Տ. 24. "___" ___ 20___ թ.	23. ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23. բ. Կ.Տ. 23. "___" ___ 20___ թ.